## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվական

**ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

գ. Փամբակ

Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:
Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռախսա Մինասյանը

**Մասնակցում էին՝**

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Արայիկ Քոչարյանը, Աշոտ Անտինյանը, Պավլիկ Պապինյանը, Արմենուհի Ոսկանյանը, Արշակ Սրապյանը, Էմմա Գասպարյանը, Սերյոժա Սարդարյանը, Գրիգոր Կարապետյանը և Շուշանիկ Հակոբյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը, Սևակ Խաչատրյանը, Թինա Բոջուկյանը և Նաիրա Հարությունյանը:

**Նիստից բացակա ավագանու անդամներ չկան:**

***Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 15 անդամ***

**ՆԻՍՏԸ** - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 12.50-ին նիստը հայտարարեց բացված: Նա ողջունեց բոլորին և շնորհավորեց ավագանուն հինգերորդ նստաշրջանի բացման կապակցությամբ, մաղթեց ավագանու անդամներին բեղմնավոր աշխատանք:

Նիստ վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 14-20-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ.

14. Փամբակ համայնքի ավագանու 13.07.2023թ-ի թիվ 82-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

15. Փամբակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից վարձակալության իրավունքով

տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

16. Արտաբյուջետային հաշիվ բացելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

17. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

18. Փամբակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից անհատույց, մշտական օգտագործման տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

19. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

20. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

***Քվեարկությամբ, կողմ՝ 15 ձայների համաձայնությամբ որոշման նախագծերն ընդգրկվեցին օրակարգում:***

**Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծերով:**

***Քվեարկությամբ, կողմ՝ 15 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 85-Ա/:***

***Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.***

***Հաստատված օրակարգը՝***

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի սեպտեմբերի 15-ի թիվ 11 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Վահագնաձորի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

3. Լիլիա Միքայելի Աբրահամյանին «Փամբակ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

4. Էմմա Լևոնի Հարությունյանին «Փամբակ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

5. Կամո Միշայի Եղիազարյանին «Փամբակ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

6. Փամբակ համայնքի Բազում գյուղի օր սահմանելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

7. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելու, վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

8. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

9. Արտաբյուջետային հաշիվ բացելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

10. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

11. Փամբակ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին վառելափայտ հատկացնելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

12. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

13. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

14. Փամբակ համայնքի ավագանու 13.07.2023թ-ի թիվ 82-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

15. Փամբակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

16. Արտաբյուջետային հաշիվ բացելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

17. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

18. Փամբակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից անհատույց, մշտական օգտագործման տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

19. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

20. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

**ԸՆԹԱՑՔԸ՝**

**1. ԼՍԵՑԻՆ -** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Վահագնաձորի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ համայնքի ղեկավարին է դիմել Փամբակ համայնքի «Վահագնաձորի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Ռոզա Փարեմուզյանը /29.08.2023թ-ի գրություն/՝ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Վահագնաձորի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու, Փամբակ համայնքի «Վահագնաձորի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանակոչելու, և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու խնդրանքով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վահագնաձոր բնակավայրը բնակչության առումով փոքր բնակավայր է, մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը փոքր է, խումբը համալրելու նպատակով մանկապարտեզը վերանվանվում է մսուր-մանկապարտեզ, որպեսզի ընդունելություն կատարվի նաև մսուրային տարիքի երեխաների շրջանում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 86-Ա/:***

**2. ԼՍԵՑԻՆ -** Լիլիա Միքայելի Աբրահամյանին «Փամբակ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հիմք ընդունելով Բազում գյուղի վարչական ղեկավար Արթուր Ծատուրյանի զեկուցագիրը, այն հանգամանքը, որ Լիլիա Միքայելի Աբրահամյանը ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում իրականացրել է բազմաթիվ բարեգործական ծրագրեր և համայնքի զարգացման գործում ունի մեծ ներդրում, առաջարկում ենք նրան շնորհել «Փամբակ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 87-Ա/:***

**3. ԼՍԵՑԻՆ -** Էմմա Լևոնի Հարությունյանին «Փամբակ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռախսա Մինասյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ հիմք ընդունելով Բազում գյուղի վարչական ղեկավար Արթուր Ծատուրյանի զեկուցագիրը, Փամբակ համայնքի Բազում գյուղի առողջապահության ոլորտում ունեցած երկարամյա աշխատանքային գործունեության, համայնքին մատուցած մասնագիտական ծառայության, բնակիչներին ցուցաբերած անհատական մոտեցման համար, առաջարկում ենք Էմմա Լևոնի Հարությունյանին շնորհել «Փամբակ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 88-Ա/:***

**4. ԼՍԵՑԻՆ -** Կամո Միշայի Եղիազարյանին «Փամբակ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռախսա Մինասյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ հիմք ընդունելով Բազում գյուղի վարչական ղեկավար Արթուր Ծատուրյանի զեկուցագիրը, Փամբակ համայնքի Բազում գյուղում բազմաթիվ բարեգործական ծրագրեր կատարելու, համայնքի զարգացման գործում մեծ ներդրում ունենալու համար առաջարկում ենք Կամո Միշայի Եղիազարյանին շնորհել «Փամբակ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 89-Ա/:***

**5. ԼՍԵՑԻՆ -** Փամբակ համայնքի Բազում գյուղի օր սահմանելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռախսա Մինասյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ հիմք ընդունելով Բազում գյուղի վարչական ղեկավար Արթուր Ծատուրյանի զեկուցագիրը և նրան ուղղված Բազում գյուղի մի խումբ բնակիչների խնդրանքը, հաշվի առնելով Փամբակ համայնքի ղեկավարի 25.08.2023թ-ի թիվ 832-Ա որոշումը՝ 2023թ-ի օգոստոսի 31-ին Փամբակ համայնքի Բազում գյուղի 160-ամյակին նվիրված հանրային միջոցառում կազմակերպելու մասին, առաջարկում ենք օգոստոսի 31-ը սահմանել Փամբակ համայնքի Բազում գյուղի օր:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 90-Ա/:***

**6. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկում է նախագծով ներկայացված նախկին 29 լոտը ավելացնել ևս 3-ով՝ աճուրդ-վաճառքով օտարել հողատեսքեր 32 լոտ, իսկ վարձակալության իրավունքով ներկայացված նախկին 11 լոտը ավելացնել ևս 1-ով՝ վարձակալության իրավունքով տրամադրել հողատեսքեր 12 լոտ, ինչպես նաև կառուցապատման իրավունքով, 50 տարի ժամկետով տրամադր հողամաս 1 լոտ:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 91-Ա/:***

**7. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով տրամադրելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ ՀՀ Լոռու մարզ Փամբակ համայնք Ձորագյուղ գյուղի 8-րդ փողոց 4/1 մանկապարտեզ հասցեում գտնվող 06-066-0012-0003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքն անհրաժեշտություն է առաջացել անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով անժամկետ տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի Փամբակ համայնքի «Ձորագյուղի Սիրանուշ Հարությունյանի անվան մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին՝ մանկապարտեզի լիցենզավորման գործընթացն իրականացնելու նպատակով:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 92-Ա/:***

**8. ԼՍԵՑԻՆ** - Արտաբյուջետային հաշիվ բացելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքահրամն բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի 17.04.2023թ-ի N ՎՏ/14.2/10764-2023 գրությունը, առաջարկում ենք թույլատրել ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգում բացել արտաբյուջետային հաշիվ՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ, GIZ) և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում «Դեբետ բնակավայրի խմելու ջրի ցանցի կառուցում» ծրագիրն իրականացնելու համար:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 93-Ա/:***

**9. ԼՍԵՑԻՆ** - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքահրամն բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է.

Բյուջեի եկամուտները ավելացնել 3700000 դրամով՝ որպես նվիրատվություն «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ից՝ համայնքի Եղեգնուտ, Դեբետ և Մարգահովիտ բնակավայրերում ծրագրերի իրականացման համար: Գյուղերը մասնակցել են «Ինչպես բարելավել գյուղի կենսապահովման պայմանները կայուն եղանակով» մրցույթին և ճանաչվել հաղթող: Նշված գումարը կուղղվի բյուջեի ծախսային հատվածի ծրագրերի իրականացման համապատասխան հոդվածներ:

Ներքին աուդիտի համար կառավարման ապարատի 4235 հոդվածով ավելացվում է 1000000 ՀՀ դրամ:

ԵՄ «Տեղական դերակատարների զորեղացում հանուն զարգացման Լոռու և Տավուշի մարզերում» ծրագրի շրջանակներում «Լոռվա Ջոր» ՏԱԽ-ի կողմից իրականացվող «Ավտոաշտարակի ձեռքբերում, համայնքային սպասարկման որակի բարձրացում» դրամաշնորհային ծրագրի համաֆինանսավորման համար նախատեսվում է արտաբյուջետային հաշիվ ուղղել 2926000 ՀՀ դրամ, իսկ «Լոռվա Ջոր» ՏԱԽ-ի կողմից համայնքի արտաբյուջետային հաշիվ կփոխանցվի 6000000 ՀՀ դրամ: Ծրագրի ընդհանուր արժեքը 8926000 ՀՀ դրամ:

ՀՀ կառավարության նիստում հաստատվել է պետության կողմից հատկացվող Մարգահովիտ, Լեռնապատ և Անտառամուտ գյուղերի փողոցների նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով սուբվենցիոն ծրագրի մասնաբաժինը՝ 61179000 ՀՀ դրամի չափով: Այն ներառվում է բյուջեի եկամուտների բաժնում և ուղղվում ծրագրերի կատարմանը:

«Բակտեկ Էկոմ» ՍՊԸ-ի կողմից համայնքին, որպես նվիրատվություն հատկացվել 1000000 ՀՀ դրամ, որն ուղղվում է Արջուտի աղբավայրում հողածածկման աշխատանքներ իրականացնելու համար:

Ջրամատակարարում նախահաշվով նախատեղվել է 1000000 ՀՀ դրամ «Դեբետ բնակավայրի խմելու ջրի ցանցի կառուցում» ծրագրի նախագծի համար: Ծրագիրն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ, GIZ) և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային՝ Կովկասում» ծրագրի շրջանակներում:

Կառավարման ապարատի 5122՝ գույքի ձեռք բերման հոդվածում, ավելացվում է 1300000 ՀՀ դրամ՝ համակարգիչ, պահարաններ և գրասենյակային գույք ձեռք բերելու նպատակով: Ծախսերի համար նախատեսված գումարները հատկացվել են բյուջեի պահուստային ֆոնդից ինչպես նաև կառավարման ապարատի և Փամբակ կոմունալ ՀՈԱԿ-ի ծախսերի կրճատման հաշվին:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 94-Ա/:***

**10. ԼՍԵՑԻՆ -** Փամբակ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին վառելափայտ հատկացնելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ հիմք ընդունելով ՀՀ ՔԿ ԼՄՔՎ Ստեփանավանի քննչական բաժնի թիվ 53-3144-22, ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչության թիվ 53-331109-22 և 53/37627-23, ՀՀ ՆԳՆ ՈԼՄՎ Գուգարքի բաժնի 57/19-3178, 57/15-691, 57/15-838, 57/19-1226 և 57/19-1334 գրությունները, Վահագնի գյուղի վարչական ղեկավար Սուրեն Վարդումյանի զեկուցագիրը՝ Վահագնիի վարչական կենտրոնը փայտով ջեռուցելու համար վառելափայտ տրամադրելու մասին, համայնքի բնակիչների դիմումները, համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 06.09.2023թ-ի թիվ 18 արձանագրությունը, առաջարկում ենք Փամբակ համայնքի վարչական տարածքից ապօրինի մթերված, իրավապահ մարմինների կողմից առգրավված և համայնքին ի տնօրինություն հանձնված ընդհանուր 10.4 խմ վառելափայտը

տրամադրել Վահագնիի վարչական կենտրոնին և համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 95-Ա/:***

**11. ԼՍԵՑԻՆ** - Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ համայնքի ղեկավարին է դիմել Տարոն Սամվելի Գևորգյանը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող 06-070-0357-0044 կադաստրային ծածկագրով 0,8551 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության խոտհարքը ձկնաբուծական արհեստական լճակներ կառուցելու և սպասարկման նպատակով ջրային օբյեկտների հողերի նպատակային նշանակության, ջրային օբյեկտների հողերի գործառնական նշանակության և կրկիր իրեն պատկանող 06-070-0359-0001 կադաստրային ծածկագրով 0,4022 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության խոտհարքը թռչնաբուծարան կառուցելու և սպասարկման նպատակով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության փոխադրելու խնդրանքով:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 96-Ա/:***

**12. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի ավագանու 13.07.2023թ-ի թիվ 82-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 13-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը անհատույց մշտական օգտագործման տրամադրելու մասին» թիվ 82-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

Որոշման առաջին մասի «միսկանթուս (բազմամյա խոտ) աճեցնելու» բառերը փոխարինել «գյուղատնտեսական գործունեություն ծավալելու» բառերով:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 97-Ա/:***

**13. ԼՍԵՑԻՆ -** Փամբակ համայնքի վարչական սահմաններում ընդգրված, պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսակն նշանակության հողամասերից վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները և մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում է ավագանուն տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 11 լոտ գյուղատնտեսական նշանակության հողամասերը 10 տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 98-Ա/:***

**14. ԼՍԵՑԻՆ -** Արտաբյուջետային հաշիվ բացելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքահիրամն բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ հիմք ընդունելով «Լոռվա Ջոր» ՏԱԽ-ի և Փամբակի համայնքապետարանի միջև 13.09.2023թ-ին կնքված դրամաշնորհի թիվ 1-2023 պայմանագիրը՝ առաջարկում ենք ավագանուն տալ համաձայնություն ԵՄ «Տեղական դերակատարների զորեղացում հանուն զարգացման Լոռու և Տավուշի մարզերում» ծրագրի շրջանակներում «Լոռվա Ջոր» ՏԱԽ-ի կողմից իրականացվող «Ավտոաշտարակի ձեռքբերում, համայնքային սպասարկման որակի բարձրացում» դրամաշնորհային ծրագրի համաֆինանսավորման և ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգում արտաբյուջետային հաշվի բացման համար:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 99-Ա/:***

**15. ԼՍԵՑԻՆ -** Համայնքային սեփականություն հանդիսացող հողամաս ուղղակի վաճառքով օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ համայնքի ղեկավարին է դիմել Հարություն Սերյոժայի Հարությունյանը՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող 06-023-0001-0007 կադաստրային ծածկագրով հողամասին կից գտնվող 06-023-0001-0021 կադաստրային ծածկագրով, 0,008539 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը գնելու խնդրանքով: Առաջարկվում է նշված հողամասը նախապատվությամբ, կադաստրային արժեքի չափով՝ 45000 (քառասունհինգ հազար) ՀՀ դրամով ուղղակի վաճառքով օտարել քաղաքացուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 100-Ա/:***

**16. ԼՍԵՑԻՆ -** Փամբակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից անհատույց, մշտական օգտագործման տրամադրելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում է ավագանուն տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 06-059-0363-0001, 06-059-0363-0001, 06-059-0363-0001 և 06-059-0114-0001 կադստրային ծածկագրերից հողամասերն անհատույց մշտական օգտագործման իրավունքով «ՄԱՅՖՈՐԵՍԹ.ԷՅԵՄ» բնապահպանական հասարակական կազմակերպություն ՀԿ-ին տրամադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 101-Ա/:***

**17. ԼՍԵՑԻՆ -** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքահիրամն բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2023 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում համայնքին է փոխանցվել դեռևս 2022 թ-ին մեկնարկած «Կոմունալ ծառայությունների բարելավում» ծրագրի շրջանակներում Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից ձեռք բերված 19-21տ. բեռնատարողությամբ, «HOWO » ZZ332783847E մոդելի ինքնաթափ մեքենան: Անհրաժեշտ է այն արտացոլել գույքագրման փաստաթղթերում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 102-Ա/:***

**18. ԼՍԵՑԻՆ -** Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ համայնքի ղեկավարի է դիմել Սուսաննա Վազգենի Էվոյանը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող 06-103-0157-0006 կադաստրային ծածկագրով 0,07399 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության խոտհարքը, գյուղմթերքների պահեստավորման կետ կառուցելու նպատակով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության փոխադրելու խնդրանքով:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 103-Ա/:***

**19. ԼՍԵՑԻՆ** - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը: Համայնքի ղեկավարը առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2023 թվականի հոկտեմբերի 13-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 104-Ա/:***

Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2023 թվականի հոկտեմբերի 13-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 13.00-ն:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ ____________________

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ ____________________

ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ ____________________

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ ____________________

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ ____________________

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ ____________________

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ ____________________

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ ____________________

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ ____________________

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ ____________________

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ ____________________

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ ____________________

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ ____________________

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ ____________________

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ ____________________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 85-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023Թ-Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի սեպտեմբերի 15-ի թիվ 11 հերթական նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի սեպտեմբերի 15-ի թիվ 11 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Վահագնաձորի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:
3. Լիլիա Միքայելի Աբրահամյանին «Փամբակ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:
4. Էմմա Լևոնի Հարությունյանին «Փամբակ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:
5. Կամո Միշայի Եղիազարյանին «Փամբակ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:
6. Փամբակ համայնքի Բազում գյուղի օր սահմանելու մասին:
7. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:
8. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:
9. Արտաբյուջետային հաշիվ բացելու մասին:
10. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
11. Փամբակ համայնքի վահագնիի վարչական կենտրոնին և համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին վառելափայտ հատկացնելու մասին:
12. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

13. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:
14. Փամբակ համայնքի ավագանու 13.07.2023թ-ի թիվ 82-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
15. Փամբակ համայնքի վարչական սահմաններում ընդգրված, պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսակն նշանակության հողամասերից վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները և մրցույթի պայմանները հաստատելու մասին:
16. Արտաբյուջետային հաշիվ բացելու մասին:
17. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամաս ուղղակի վաճառքով օտարելու մասին:
18. Փամբակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից անհատույց, մշտական օգտագործման տրամադրելու մասին:
19. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:
20. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՁՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 86-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ՎԱՀԱԳՆԱՁՈՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 11-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի ,,դ,, կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Փամբակ համայնքի «Վահագնաձորի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Ռոզա Փարեմուզյանի 29.08.2023թ-ի գրությունը՝ Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Վահագնաձորի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Վահագնաձորի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն անվանումով:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Վահագնաձորի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒՐԷՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Հավելված
Փամբակ համայնքի ավագանու
2023 թվականի սեպտեմբերի 15-ի
N 86-Ա որոշման

ԿԱԶՄՎԱԾ Է 2023 ԹՎԱԿԱՆԻ ____ԻՆ
ԲԱՂԿԱՑԱԾ Է 9 (ԻՆԸ) ԹԵՐԹԻՑ
ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿ
ՕՐԻՆԱԿ ____

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի

ԹԻՎ 86-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

________________ Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Կ.Տ.

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ

ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«___»____________________2023Թ.

ԳՐԱՆՑՄԱՆ N ____________________

ՎԿԱՅԱԿԱՆ N ____________________

ՀՎՀՀ ____________________________

<<_____>> _______________ 2023թ.

______________________________

Կ.Տ.

# ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ՎԱՀԱԳՆԱՁՈՐԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Փամբակ համայնք 2023
թվական

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Վահագնաձորի մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական կրթական առնվազն մեկ տեսակի ծրագիր և (կամ) նախադպրոցական ծառայություններ:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է ՝Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ, Վահագնաձորի համայնք 3 փողոց, 9 մանկապարտեզ(փոստային ինդեքս՝ 2039):`

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Վահագնաձորի մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ».

2) հայերեն կրճատ՝ «Վահագնաձորի մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ».

3) ռուսերեն լրիվ՝ОБЩИНА ПАМБАК ЛОРИЙСКОЙ ОБЛАСТИ РА «Ясли-сад Ваагнадзора» НКО.

4) ռուսերեն կրճատ՝ «Ясли-сад Ваагнадзора» НКО.

5) անգլերեն լրիվ՝PAMBAK COMMUNITY OF LORI MARZ OF RA « Nursery kindergarten of Vahagnadzor » NPO.

6) անգլերեն կրճատ՝ « Nursery kindergarten of Vahagnadzor» NPO»:

6. Հաստատությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7. Հաստատությունն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

8. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

9. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

10. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

11. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

## 2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով:

13. Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

14. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

15. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

16. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

17. Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:

18. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝

1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

5) սաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:

19. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) ստեղծել ռեսուրս-կենտրոններ՝ իրականացնել մասնագետների վերապատրաստման, խորհրդատվական դասընթացներ, վարել ծնողական կրթությանը միտված դասընթացներ և ծրագրեր.

3) կազմակերպել երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք.

4) կազմակերպել ճկուն ռեժիմով երեխային սպասարկելու ծառայություններ.

5) կազմակերպել սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք:

## 3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

20. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) համապատասխան:

21. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

22. Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

23. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

24. Երեխայի ընդունելությունը նախադպրոցական ուսումնական հաստատություն, անկախ կազմակերպական-իրավական ձևից, իրականացվում է ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

25. Հաստատության և ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

26. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

27. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

28. Տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև 30-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

29. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք, կրթական տարբեր ծրագրեր յուրացնող երեխաներով ձևավորված խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

30. Նախադպրոցական ուսումնական հաստատություններն ըստ տեսակների լինում են՝

1) մսուր՝ 0-3 տարեկանների ընդգրկմամբ.

2) մսուր մանկապարտեզ՝ 0-6 տարեկանների ընդգրկմամբ.

**3) մանկապարտեզ՝ 3-6 տարեկանների ընդգրկմամբ.**

4) նախակրթարան՝ 5-6 տարեկանների ընդգրկմամբ.

5) կենտրոն՝ 0-6՝ նախադպրոցական բոլոր կամ որևէ տարիքային խմբի ընդգրկմամբ:

31. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը սահմանվում է հիմնադրի որոշմամբ:

32. Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

33. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:

34. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

35. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը հիմնադրի միջոցների հաշվին աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ ենթարկվում են բժշկական զննության:

## 4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

36. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխան.

2) ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).

3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), դաստիարակը, դաստիարակի օգնականը, լոգոպեդը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչը, բուժաշխատողը, խմբակի ղեկավարը և այլ մասնագետներ:

37. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

38. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

39. Սանի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

40. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած տարիֆաորակավորման բնութագրերին:

41. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

## 5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

42. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը (պետական և համայնքային հաստատությունների դեպքում), գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

43. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

44. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմի հաստատումը.

3) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

4) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

5) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

6) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

45. Հիմնադիրը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

46. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

47. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգնստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի

հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

48. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

49. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

50. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է դաստիարակների թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.

9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

